ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՀԱՄԱՐ

Պատմ. գիտ. դոկտոր Զ. Տ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայ ժողովուրդը, որ անցել է օտար զավթիչների դեմ մղած պայքարի հերոսական դրվագներով լի ավելի քան 25 երկար ու ձիգ դարերի հարուստ ճանապարհ, XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին կանգնել էր ֆիզիկական ոչնչացման իրական սպառնալիքի առաջ։ Այդ աղետից հայ ժողովուրդը փրկվեց շնորհիվ ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնության, շնորհիվ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման։

Այդ նշանավոր իրադարձության 150-ամյակի տոնակատարության առթիվ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի որոշման մեջ մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ ասված է. «Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանին պատմական խոշորագույն ուղենիշ եղավ հայ ժողովրդի կյանքում... Ռուսաստանին միանալը հայ ժողովրդին փրկեց ֆիզիկական բնաջնջման սպառնալիքից, բացեց ազգային համախմբման հնարավորություններ»[1]։

Հայ ժողովրդի կյանքում Ռուսաստանի խաղացած այդ պատմական դերը հավուր պատշաճի գնահատելու համար դիմենք մեր ժողովրդի պատմությանը։

Սկսած հեռավոր ժամանակներից Հայաստանը եղել է Մերձավոր Արևելքում ագրեսիվ մեծ տերությունների հակամարտությունների թատերաբեմ։ Նրանցից ամեն մեկը ձգտել է նվաճել ու իրեն ենթարկել հարուստ և միաժամանակ ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Հայոց աշխարհը։ Իր ազատությունն ու անկախությունը պաշտպանելու համար շատ անգամ համարձակ պայքարի դրոշ պարզած հայ ժողովուրդը, անհավասար մենամարտերում չդիմանալով հզոր ու ենթամիտ ախոյանների հարվածներին, հաճախ է կորցրել իր անկախությունը և ազգային պետականությունն ու մի նվաճողից անցել մեկ ուրիշի տիրապետության տակ։ Ի վերջո, 1555 թ. Հայաստանը բաժանվեց Արևելքի բռնապետական երկու պետությունների՝ շահական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի միջև։ Հինավուրց Հայաստանի արևելյան հատվածը բաժին ընկավ Պարսկաստանին, իսկ արևմտյանը՝ Թուրքիային։ Այդ բաժանումը վերահաստատվեց 1639 թ.։ Սկսվեց հայ ժողովրդի բազմադարյան պատմության ամենամռայլ ու դաժան ժամանակաշրջանը։ Շուրջ երեք դար շարունակվեցին սոցիալական վայրագ կեղեքումն ու հարստահարումը, ազգային և կրոնական բիրտ խտրականությունը, պարսիկ խանների ու թուրք փաշաների սանձազերծ կամայականությունները։

Հայ ժողովրդի նկատմամբ պարսկական և թուրքական կառավարությունների վարած պետական պաշտոնական քաղաքականության գլխավոր գիծը

---

1 *Տե՛ս «Սովետական Հայաստան», 31 մարտի 1978։*

սկզբից ևեթ եղել է ժողովրդի անողոք կեղեքումը, նրա մասնատումը, ձուլումը և բնաջնջումը։ Հայերի զանգվածային բռնագաղթերը, նրանց մահմեդականացման և ձուլման գիշատիչ քաղաքականությունը, կողոպուտն ու երկրի ավերումը սովորական էին դարձել շահական և սուլթանական վարչակարգերի համար։ Ավերվել ու փլատակների էին վերածվել բազմաթիվ գյուղեր և քաղաքներ։ Օրինակ, Երևանի խանության երբեմնի շեն 1111 գյուղերից XIX դարի սկզբներին բոլորովին ավերվել ու անմարդաբնակ էին դարձել 359 գյուղ[2], մնացածներն էլ կիսավեր վիճակում էին։ Այս մասին վկայում են ոչ միայն հայրենի, այլև օտար բազմաթիվ աղբյուրներ, տարբեր առիթներով Հայաստան այցելած շատ օտարերկրացիներ։ Օրինակ, անգլիացի Ջեյմս Մորիերը, XIX դարի սկզբներին լինելով Հայաստանում, Ապարանի գավառի մասին գրել է. «...մենք բնակության միայն հետքեր տեսանք, ամեն ինչ կատարյալ ամայության մեջ էր»[3]։ Նույնը հաստատում է 1817 թ. Երևանի խանությունն այցելած անգլիացի գնդապետ Ջոն Ջոնսընը. «...տներից մեկ քառորդն անգամ բնակեցված չէ»[4],— գրում է նա։

Շահական կառավարությունը հետևողականորեն վարում էր «Հայաստանը հայերից դատարկելու» քաղաքականություն։ Դրա հետևանքով հայ ժողովրդի բնօրրան Արարատյան երկիրը որբացել, արյունաքամ էր եղել, զրկվել իր հարազատ ժողովրդի մեծ մասից։ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելու նախօրյակին ապագա Հայկական մարզում հայերը այնքան էին նվազել, որ հազիվ կազմում էին բնակչության 25 տոկոսը[5]։ Գրեթե նույն վիճակին էր հասցվել Երևանի խանությունը. գրավոր աղբյուրների տվյալներով այստեղ հայերը կազմում էին բնակչության ընդամենը 33,8 տոկոսը[6]։

Պարսիկ տիրակալներն իրենց հպատակ հայերից գանձում էին ավելի քան երեք տասնյակ անուն ուղղակի և անուղղակի հարկ, նրանց մատնելով կատարյալ թշվառության։ «Բացի բոլոր ընդհանուր և հատուկ հարկերից և պարտավորություններից,— գրում է Լեոն,— ռայան հարկ էր տալիս և մարդկային մսով։ Այս էին արտահայտում պարբերաբար կրկնվող մանկաժողովները ու աղջկաժողովները»[7]։

Հայ մեծ լուսավորիչ-դեմոկրատ Խաչատուր Աբովյանը, որպես ականատես, խոր կսկիծով ու անհուն դառնությամբ է նկարագրել խաների կրնկի տակ հեծող հայերի թշվառ կացությունը։ «Աստված ոչ շհանց տա. անօրենի ձեռը դուշմանս չի ընկնի,— գրել է նա,— Մարդ ո՞ր հողը տա գլխին. ինչ ուզում են, էն են անում։ Դատաստան չկա, իրավունք չկա... Աղջիկն ասես քաշում էին, տղեն ասես տանում, շատ անգամ թուրքացնում, հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում։ Ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մալը, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանը, ո՛չ օղլուշաղը»[8]։

---

2 Տե՛ս Н. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852, էջ 486։

3 Հով. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Զ, Երևան, 1934, էջ 331։

4 Նույն տեղում, էջ 641։

5 Տե՛ս Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 337։

6 Տե՛ս Խ. Ավդալբեկյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում 1800—1917 թթ., Երևան, 1959, էջ 16։

7 Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մասն Ա, Երևան, 1926, էջ 42։

8 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, Երևան, 1948, էջ 38։

Աբովյանի կողմից ներկայացված այս ցնցող պատկերը տիպական էր պարսկական բարբարոս վարչակարգի կողմից ստրկացված հայության համար ամենուրեք և խանական տիրապետության բոլոր ժամանակներում։ Այս ամենին եթե ավելացնենք նաև Արևելյան Հայաստանի անտեսական ու մշակութային կյանքի խոր անկումը, ապա իրոք կհամոզվենք, որ XIX դարի սկզբներին արևելահայերի ֆիզիկական գոյության համար ստեղծվել էր լուրջ սպառնալիք։ Նրանք այդ ծանր վիճակից դուրս եկան Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելու շնորհիվ։ Ավելին, հայ ժողովրդի ճակատագրի համար շրջադարձային նշանակություն ունեցող պատմական այդ իրադարձության հետևանքով նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Արևելյան Հայաստանը հայ ժողովրդի աղգահավաքման-համախմբման հաստատուն և հուսալի օջախ դարձնելու համար։

Համազգային բախտորոշ կարևորություն ներկայացնող այդ գործի հաջող իրագործման հարցում առաջնահերթ նշանակություն ստացավ Պարսկաստանից և Թուրքիայից հայերի զանգվածային ներգաղթի կազմակերպումը Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստան։ Ժամանակի հայ ազատագրական շարժման գործիչները այդ զանգվածային վերաբնակեցմանը խիստ սկզբունքային նշանակություն էին տալիս։ Ներգաղթի միջոցով պարսկահայերն ու արևմտահայերը փրկվում էին խաների, փաշաների ու բեյերի ճիրաններից, վերանում էր նրանց սպառնացող ձուլման ու բնաջնջման վտանգը։ Այնուհետև, զանգվածային ներգաղթը հնարավորություն էր ստեղծում մարդաբնակ դարձնել ավերված ու ամայացված Արևելյան Հայաստանը, զարկ տալ նրա տնտեսական, մտավոր և քաղաքական կյանքին։ Եվ, վերջապես, այդ միջոցառումը թույլ էր տալիս հիմնավորապես փոխել երկրամասի բնակչության էթնիկական կազմը և վերականգնել հայ բնակչության թվական գերակշռությունը։

Այս ամենի հաջող իրագործումը հայ գործիչներին հույս էր ներշնչում կրկին գործնական հողի վրա դնել և ինչ-որ ձևով ու ինչ-որ չափով դրականորեն լուծել Ռուսական կայսրության շրջանակներում հայկական պետականության վերականգնման հարցը։ Սման ակնկալության իրագործման համար կային որոշ նախադրյալներ։ Մեր կարծիքով, այդպիսի հուսադրող նախադրյալ նախ պետք է համարել ամբողջ XVIII դարի հայ-ռուսական հարաբերությունների զարգացման ընթացքը։ Հայտնի է, որ XVIII դարում հայ-ռուսական հարաբերություններն ընթացան հայաստանը ռուսական զենքի օգնությամբ պարսիկ խաների ու թուրք փաշաների տիրապետությունից ազատագրելու և Ռուսաստանի հովանավորության տակ հայկական պետություն ստեղծելու նշանաբանով։ Դա իր արտացոլումն է գտել Ի. Օրու, Հ. Էմինի, Շ. Շահամիրյանի, Մ. Բաղրամյանի, Հովհ. Լազարյանի, Հ. Արղությանի և XVIII դարի հայ ազատագրական շարժման մյուս գործիչների կազմած ու ռուսական արքունիք ներկայացված ծրագրերում, ինչպես նաև ցարական արքունիքի հետ նրանց վարած բանակցություններում։ XIX դարի 20-ական թթ. հայ ազատագրական շարժման գործիչները (Ն. Աշտարակեցի, Խ. Լազարյան, Ալ. Խուդաբաշյան, Կ. Արղության և ուրիշներ) ակնկալում էին, որ ցարական արքունիքը հաստատ կմնա կայսրության շրջանակներում հայկական պետականության վերականգնման իր խոստումներին։

Ռուսական կայսրության շրջանակներում հայկական պետականության վերականգնման հարցի դրական լուծման մյուս հուսադրող նախադրյալը հան-

դիսացել է XIX դարի առաջին երեսնամյակին տեղի ունեցած ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին հայ ժողովրդական զանգվածների ակտիվ մասնակցությունը, ռուսական բանակներին նրանց ցույց տված ռազմական, տնտեսական ու բարոյական օգնությունը, հայ ազատագրական շարժման հաստատ ու հետևողական ռուսական կողմնորոշումը, հանգամանքներ, որոնք, անտարակույս, իրենց դրական նշանակությունն ունեցան Կովկասյան հատուկ կորպուսի տարած հաղթանակներում։

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի առաջին իսկ օրերից սեփական նախաձեռնությամբ կազմակերպվեցին հայկական աշխարհազորային ջոկատներ, որոնք ռուսական զորքերի հետ կողք-կողքի կռվեցին պատերազմի և՛ ծանր պաշտպանական, և՛ հաղթական հարձակողական մարտերում Ղարաբաղում, Զանգեզուրում, Լոռի-Փամբակում, Շիրակում, Արարատյան դաշտում և այլուր։ Ռուսական բանակի գլխավոր շտաբի հավանությամբ և հաստատած պայմաններով, 1827 թ. մարտ—օգոստոս ամիսներին, Ն. Աշտարակեցու և Հ. Ալամդարյանի գործուն մասնակցությամբ, Թիֆլիսում կազմակերպվում են հայկական կամավորական երեք դրուժիններ և ուղարկվում Երևանի տակ միանալու ռուսական գործող կորպուսին[9]։ Մինչև պատերազմի ավարտը այդ դրուժինները աճելով դառնում են գումարտակներ ու գնդեր և իրենց ակտիվ մասնակցությունը բերում հաղթական շատ ճակատամարտերի[10]։ Որպես հատուցումն այս ծառայությունների, ակնկալվում էր, որ դրականորեն կլուծվի ռուսական հովանու ներքո հայկական պետության վերականգնման հարցը։

Եվ, վերջապես, հայ ազատագրական շարժման գործիչներին քաջ հայտնի էր, որ այդ նույն ժամանակաշրջանում Ռուսական կայսրության շրջանակներում կային ներքին ինքնավարական իրավունքներով օգտվող ժողովուրդներ՝ հանձինս ֆինների և լեհերի։ Հետևապես չէր բացառվում նույնպիսի իրավունք նվաճելու հնարավորությունը նաև հայերի համար։ Այս ամենի թելադրումով հայ ազատագրական շարժման գործիչներ Խ. Լազարյանը, Ալ. Խուդաբաշյանը և Կ. Արղությանը ցարական արքունիք են ներկայացնում Ռուսաստանի կազմում հայերին ինքնավարություն շնորհելու մասին իրենց հայտնի նախագիծը։

Սակայն իզուր էին նրանց ջանքերը։ Փոխվել էին ժամանակները, փոխվել էր Մերձավոր ու Միջին Արևելքում մեծ տերությունների ուժերի հարաբերակցությունը, և ցարիզմը վաղուց էր «մոռացել» հայերին տված իր խոստումները։ Նիկոլայ I-ը բավարարվեց նրանով, որ Թուրքմենչայի պայմանագիրը կնքվելուց մի կարճ ժամանակ անց՝ 1828 թ. մարտի 21-ին, հրամանագիր ստորագրեց կայսրության կազմում Հայկական մարզ ստեղծելու մասին, որի մեջ միավորվեցին Երևանի ու Նախիջևանի նախկին խանությունները և Օրդուբադի գավառը։

Հայկական մարզը, որպես առանձին վարչական միավոր, թեպետ գոյատևեց ընդամենը 12 տարի, բայց օբյեկտիվորեն որոշ դրական նշանակություն ունեցավ։ Մասնավորապես, Հայկական մարզը դարձավ վարչական հավաքական մի օջախ, որն իրեն էր ձգում փաշաների, խանների ու բեյերի արյունալի տիրապետության տակ բռնադատվող տասնյակ հազարավոր հայերի։

9 Տե՛ս ЦГВИА, ф. ВУА, д. 4336, թթ. 2—5, 6, 9, 14։

10 Տե՛ս նույն տեղում, գ. 4338, թ. 37—38։

Արևելյան Հայաստանի բնակեցման հարցը զբաղեցրել է նաև ցարական արքունիքին և Կովկասյան կորպուսի հրամանատարությանը։ Նրանք նույնպես շահագրգռված էին, որ նորադրավ հողերը դառնան մարդաբնակ։ Ցարական արքունիքի և Կովկասյան կորպուսի հրամանատարության շահագրգռվածությունն այդ հարցում նախ պայմանավորված էր Արևելյան Հայաստանի տարածքի ռազմաստրատեգիական կարևորությամբ։ Նրանք կամենում էին Պարսկաստանի և Թուրքիայի սահմանամերձ շրջանները բնակեցնել Ռուսաստանի համար հուսալի էթնիկական տարրով։ Բացի դրանից, զանգվածային գաղթի միջոցով ցարական արքունիքը ցանկանում էր լուծել նաև Արևելյան Հայաստանը տնտեսապես օգտագործելու խնդիրը։

Ռուսական բանակի գլխավոր շտաբի պետ Դիբիչը և Կովկասյան կորպուսի հրամանատար Պասկևիչը դեռևս մինչև Թուրքմենչայի պայմանագրի կնքումը առաջադրեցին իրենց ծրագիրը։ Նրանք գտնում էին, որ սահմանամերձ շրջաններում պետք է ստեղծել զինվորական բնակավայրեր, ուր սկզբնական շրջանում կբնակեցվեն 80 հազար կազակներ[11]։ Դիբիչի ու Պասկևիչի նախատեսումների համաձայն այդ «զինվորական բնակավայրերը» աստիճանաբար պետք է աճեին Ռուսաստանից պարբերաբար ստացվող համալրումների հաշվին։

Սակայն շուտով հայտնի դարձավ, որ այդ ծրագիրը մի շարք պատճառներով անիրագործելի է։ Ցարական արքունիքը Դիբիչի և Պասկևիչի առաջադրած ծրագիրը թողեց ապագային, իսկ սահմանամերձ շրջանները էթնիկական հուսալի տարրով շուտափույթ բնակեցնելու հարցի լուծումը տեսավ Պարսկաստանից և Թուրքիայից հայերի զանգվածային ներգաղթ կազմակերպելու մեջ։

Այսպիսով, ստեղծվեց մի վիճակ, երբ Պարսկաստանից և Թուրքիայից Արևելյան Հայաստան հայերի ներգաղթով շահագրգռված էին և՛ հայերը, և՛ ռուսական կառավարող շրջանները։ Ուստի 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմն ավարտվելուն պես այդ հարցը գործնական ընթացք ստացավ։

* * *

Պարսկաստանից հայերի ներգաղթը Արևելյան Հայաստան պաշտոնապես թույլատրվում է Թուրքմենչայի հաշտության պայմանագրով։ Պարսկաստանում բնակվող հայերը մեծ գոհունակությամբ են ընդունում իրենց արտոնված գաղթի իրավունքը և բուռն ցանկություն հայտնում օր առաջ փոխադրվել Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստան։

Թուրքմենչայի պայմանագրի կնքումից անմիջապես հետո սկսվում է ներգաղթի նախապատրաստումն ու իրագործումը։ Այդ նպատակով Երևանի մարզային ժամանակավոր վարչությանը կից ստեղծվում է ներգաղթի կոմիտե, որը Հայկական մարզի վարչության կազմումից հետո գործում է նրան առընթեր։ Իսկ Պարսկաստանից ներգաղթի կազմակերպման գործը դրվում է XVIII դարի երկրորդ կեսից սկսած հայ ազատագրական շարժման մեջ զգալի դեր խաղացած Լազարյանների ընտանիքի ներկայացուցիչ, 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի մասնակից, զնդապետ Լազար Լազարյանի վրա։ Նրան որպես օգնականներ տրվում են փոխգնդապետ Մովսես Արղությանը-

11 Տե՛ս Акты, т. VII, էջ 322, 339—340։

մայորներ Իվանե Մելիքյանը, Իսահակ Ղամազյանը, Դավիթ և Ալեքսանդր Ղորղանյանները և ուրիշ զինվորականներ ու քաղաքացիական պաշտոնյաներ[12]։

Ներգաղթի հետ կապված ծախսերը հոգալու, ինչպես նաև խիստ կարիքավորներին նպաստ տալու համար Լ. Լազարյանի տրամադրության տակ դրվում է 25 հազար ռուբլի արծաթ դրամ (որը հավասար էր 100 հազար ռուբլի թղթադրամի)։ Գաղթի կազմակերպման կարգի և պայմանների մասին Լ. Լազարյանին տրվում է հատուկ հրահանգ[13]։ Գաղթը կազմակերպվում է բացառապես կամավոր սկզբունքով։ Հրահանգի համաձայն գաղթող գյուղացիներին տրվում է քավարար չափով հող, իսկ առևտրականներին՝ տեղաբնիկ առևտրականներին համահավասար իրավունքներ։ Ներգաղթողները վեց տարով ազատվում են հարկեր վճարելուց և երեք տարով՝ բոլոր տեսակի պարհակներից։

Պարսկաստանից հայերի գաղթի կազմակերպմանը գործուն մասնակցություն ունեցավ ռուս նշանավոր գրող Ա. Ս. Գրիբոյեդովը, որը 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում գլխավորում էր Կովկասյան հատուկ կորպուսի արտաքին դիվանագիտական գործերը։ Այդ ժամանակամիջոցում Գրիբոյեդովը մոտիկից ծանոթացավ հայ ժողովրդի հարուստ պատմությանը, օտար զավթիչների դեմ նրա մղած հերոսական պայքարին, ինչպես նաև խանական ճիրաններում հայ գանգվածների թշվառ կացությանը։ Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո, երբ Գրիբոյեդովը նշանակվեց Ռուսաստանի արտակարգ լիազոր դեսպան Պարսկաստանում, նա անում էր ամեն ինչ պարսկահայերին խանական ստրկությունից փրկելու համար։ Գաղթի նախապատրաստման ու իրագործման ընթացքում նա սերտ կապերի մեջ էր Լ. Լազարյանի ու Հայկական մարզի վարչությանն առընթեր գործող գաղթի կոմիտեի հետ և օգնում էր նրանց՝ հաջողությամբ իրագործելու գաղթը։ Ա. Գրիբոյեդովը նույնիսկ մտահոգվում էր գաղթականների թողած անշարժ գույքի պահպանման ու վաճառքի գործերով։ «Մեր կողմն անցավ մինչև 8000 հայկական ընտանիք,— գրում էր նա,— և ես հիմա նրանց մնացած գույքն անվթար պահելու համար գիշեր-ցերեկ քուն ու հանգիստ չունեմ, պահպանում եմ նրանց ունեցվածքը և եկամուտները։ Այս բոլորը ինչ-որ կերպ արվում է իմ ցուցումներով»[14]։

Ներգաղթի նախապատրաստման և իրագործման մեջ իր նշանակալից ներդրումն ունի հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ջերմեռանդ պաշտպան Ներսես Աշտարակեցին։ Ներգաղթին տալով հայրենասիրական մեծ նշանակություն, նրա հաջող իրագործման համար Ն. Աշտարակեցին գործի է դնում իր անսպառ եռանդը, բարձրաստիճան հոգևորականի իր հեղինակությունն ու ազդեցությունը, ինչպես նաև իր կապերը Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատարության հետ։ Ն. Աշտարակեցին հատուկ պատվիրակների միջոցով մեծ աշխատանք է ծավալում Ատրպատականի հայկական շրջաններում, հայերին հորդորելով ներգաղթել Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստան։ Որպես Հայկական մարզի վարչության անդամ նա

12 Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 58, վավ. 133։

13 Տե՛ս ЦГВИА, ф. ВУА, д. 978, թ. 3—9; С. Глинка, Описание переселения армян аддербиджанских в пределах России, М., 1831. «Նկարագիր գաղթականության հայոց Պարսկաստանէ ի Ռուսաստան», Մոսկվա, 1832։

14 А. С. Грибоедов, Полное собрание сочинений, т. III. Пг., 1917, էջ 237։

մեծ ջանքեր է գործադրում նաև գաղթականների ընդունման և տեղավորման գործը հաջող կազմակերպելու համար։

Հայերի զանգվածային գաղթի նախապատրաստումը և իրագործումն ընթացավ դժվարին պայմաններում։ Խոշոր եկամուտներ բերող հայ հմուտ հողագործներից, շնորհալի արհեստավորներից ու գործիմաց վաճառականներից չզրկվելու համար պարսիկ խաները գործադրում էին ամեն միջոց, որպեսզի գաղթը խափանվի։ Այդ նպատակով նրանք ահաբեկում էին գաղթելու ցանկություն հայտնող իրենց հայ հպատակներին, ճախողում նրանց անշարժ գույքի վաճառքը, կազմակերպում ավազակային հարձակումներ գաղթականների քարավանների վրա և դիմում այլ միջոցների։ Խաների այս տմարդի արարքները հովանավորվում և հրահրվում էին անգլիական դիվանագետների կողմից[15]։

Չնայած ստեղծված դժվարություններին ու արգելքներին, ո՛չ պարսիկ խաները և ո՛չ էլ նրանց գործակից անգլիական դիվանագետները չկարողացան ետ կանգնեցնել հայերին հայրենիք վերադառնալու իրենց որոշումից։ Արևելյան Հայաստան ներգաղթելու նրանց ցանկությունն այնքան մեծ էր ու հաստատ, որ շատերը, չսպասելով անգամ իրենց համար սահմանված հերթին, ժամանակից շուտ սկսեցին շարժվել դեպի ռուսական սահմանները։

Ներգաղթողներին մեծ օգնություն էին ցույց տալիս նաև Պարսկաստանում գտնվող ռուսական զորամասերը։ Նրանք ուղեկցում էին գաղթականների քարավանները, ապահովում նրանց կյանքը և ունեցվածքը խանական հրոսակների ավազակային հարձակումներից։ Ներգաղթողների քարավաններն ուղեկցող սպաներից շատերը հաճախ իրենց ձիերը տրամադրում էին կանանց ու երեխաներին, իսկ անձրևային ու ցուրտ եղանակներին նրանց էին տալիս անգամ իրենց տաք հագուստները[16]։

Ահա այսպիսի դժվարին պայմաններում էր իրագործվում պարսկահայերի ներգաղթը Արևելյան Հայաստան։

Թուրքմենչայի պայմանագրով սահմանված մեկամյա ժամկետում Պարսկաստանից (մեծ մասամբ՝ Թավրիզից, Խոյից, Մակուից, Սալմաստից, Ուրմիայից) Արևելյան Հայաստան ներգաղթեց 8249 ընտանիք[17]։ Եթե ընդունենք, որ հայ ընտանիքները այդ ժամանակ բազմանդամ էին՝ ոչ պակաս 5—6 անձից, ապա կստացվի, որ Պարսկաստանից ռուսական տիրապետության սահմանները գաղթեց շուրջ 45 հազար մարդ։ Նրանք բնակեցվեցին Երևան, Նախիջևան, Օրդուբադ քաղաքներում, Զանգիբասարի, Կարբիբասարի, Գառնիբասարի, Դարաչիչակի, Ապարանի, Սուրմալուի մահալներում և մասամբ՝ Վայոց ձորում։ Մի քանի հարյուր ընտանիք էլ բնակություն հաստատեց Ղարաբաղում։

Դեռևս չէր ավարտվել պարսկահայերի գաղթը, երբ Ռուսաստանի հաղթանակով է ավարտվում նաև 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը և 1829 թ. սեպտեմբերի 2(14)-ին ստորագրվում է Ադրիանապոլսի հաշտության պայմանագիրը[18]։ Թուրքիայի հովանավոր արևմտյան մեծ տերություն-

15 Տե՛ս С. Глинка, նշվ. աշխ.։ «Նկարագիր գաղթականության Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան»։

16 Տե՛ս ЦГВИА, ф. ВУА, д. 978, թ. 22—26։

17 Տե՛ս С. Глинка, նշվ. աշխ., էջ 131։ «Նկարագիր գաղթականության հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան», էջ 94։

18 Տե՛ս «Договоры России с Востоком, политические и торговые», СПб., 1869, էջ 71—80։

ների կամքով նրան վերադարձվեցին պատերազմի ընթացքում Կովկասյան հատուկ կորպուսի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի գավառները, որոնք գտնվում էին Ադրիանապոլսի պայմանագրով հաստատված սահմանագծից դուրս։ Դրանից հետո արևմտահայերին մնում էր օգտվել այդ պայմանագրի 13-րդ հոդվածից, որով փոխադարձ գաղթի իրավունք էր արտոնվում։

Թուրքիայից հայերի գաղթը տնօրինելու համար 1830 թ. հունվարի 28-ին Թիֆլիսում Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Զավիլևսկու նախագահությամբ ստեղծվում է գաղթը գլխավորող մարմին։ Արևմտահայերի գաղթը կազմակերպվում է նույն պայմաններով, ինչպես կատարվեց պարսկահայերի գաղթը։ Սուլթանական բռնատիրության ներքո իրենց տառապալից գոյությունը մի կերպ քարշ տվող տասնյակ հազարավոր հայեր հարկադրված եղան թողնել հայրենի երկիրը, տուն ու տեղը, պապենական օջախները և բռնել զրկանքներով լի գաղթի ճանապարհը, որպեսզի փրկվեն թուրք սատրապների բարբարոսություններից։

Ջնայած փաշաների, բեյերի ու նրանց հովանավոր անգլիական դիվանագետների հարուցած բոլոր արգելքներին և բացահայտ դիմադրությանը, արևմտահայերի գաղթը ևս հաջող ընթացավ։ Թուրքիայից Արևելյան Հայաստան և Անդրկովկասի այլ շրջաններ գաղթած հայերի ընդհանուր թիվը հասավ 14047 ընտանիքի[19], որը մոտավոր հաշիվներով կազմում է շուրջ 90—100 հազար մարդ։

Արևմտահայ գաղթականները, ըստ իրենց նախկին բնակավայրերի, բաժանվում են հիմնականում երեք խմբի՝ էրզրումցիներ, բայազետցիներ և կարսեցիներ։ Էրզրումի փաշայությունից գաղթած 7298 ընտանիք հաստատվեց Ախալցխա ու Ախալքալաք քաղաքներում և նրանց շրջակա գյուղերում, մասամբ էլ՝ Շիրակի ու Ծալկայի գյուղերում։ Բայազետի փաշայությունից գաղթած 4215 ընտանիք բնակություն հաստատեց Սևանի ավազանում, Դարաչիչակում և Սուրմալուում։ Կարսից և համանուն փաշայությունից գաղթած 2467 ընտանիք տեղավորվեց Ալեքսանդրապոլ քաղաքում, Ապարանի ու Թալինի գյուղերում և Լոռիում։ Մնացած 67 ընտանիքն էլ գաղթեց Արդահանից։

* * *

Պարսկաստանից և Թուրքիայից Թուրքմենչայի ու Ադրիանապոլսի պայմանագրերով արտոնված հայերի զանգվածային գաղթը Արևելյան Հայաստան նշանակալից քայլ եղավ բնակչության թվի զգալի ավելացման, ազգային կազմի փոփոխման, հայ տարրի ավելացման և Արևելյան Հայաստանը հայ ժողովրդի ազգահավաքման օջախի վերածման գործում։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց ընդամենը երեքչորս տարի անց Հայկական մարզում զգալիորեն աճում է հայ բնակչության թիվը։ Այսպես, օրինակ, եթե Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման նախօրյակին ապադա Հայկական մարզում հայերը կազմում էին 25151, իսկ այլազգիները՝ 81749 մարդ, ապա 1831 թ. այնտեղ բնակվող հայերի թիվը հասնում է 82377 մարդու[20]։

---

19 Տե՛ս Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 441—442։ Մ. Դարբինյան, Արևմտահայերի 1828—1831 թթ. գաղթը Հայկական մարզ և հարակից շրջանները («Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 2)։ В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, М., 1918, էջ 100։

20 Տե՛ս Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 337։

Բնակչության թվական աճի և նրա ազգային կազմի խոշոր փոփոխություն նույն տարիներին տեղի է ունենում նաև Սովետական Հայաստանի այժմյան ամբողջ տարածքում։ Այսպես, օրինակ, գրավոր աղբյուրների վկայությամբ 1827 թ. Սովետական Հայաստանի այժմյան տարածքի վրա ապրել է 97421 մարդ, որից հայ՝ 45707։ 1831 թ. այդ տարածքի վրա ապրող բնակչության ընդհանուր թիվը հասնում է 161747 մարդու, որից 110671-ը՝ հայ[21]. իսկ մեկ տարի անց բնակչության ընդհանուր թիվը հասնում է 168530 մարդու, որից 116816-ը՝ հայ[22]։

Թուրքիայից հայերի գաղթը Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստան, Կովկաս, ինչպես նաև կայսրության ներքին նահանգները, շարունակվում է նաև հետագայում, մասնավորապես 1853—1856, 1877—1878, 1894—1897 թթ.։

Ջանգվածային ներգաղթերի և բնական աճի ավելացման հետևանքով հայ բնակչության թիվը արագորեն ավելանում է Արևելյան Հայաստանում, ինչպես նաև ամբողջ Ռուսական կայսրության մեջ։ 1897 թ. մարդահամարի տվյալներով, Սովետական Հայաստանի այժմյան տարածքի վրա ապրող բնակչության թիվը հասնում է 739900, իսկ 1914 թ.՝ 1014255 մարդու։ Բնակչության ընդհանուր աճին զուգընթաց նկատելիորեն ավելանում է հայերի թիվը. եթե 1831 թ. Սովետական Հայաստանի այժմյան տարածքի վրա բնակվել են ընդամենը 110671 հայեր, ապա 1897 թ. նրանց թիվը հասնում է 510855 մարդու։ 1897 թ. նույն մարդահամարի տվյալներով Կովկասում ապրող հայերի թիվը հասնում է 1148673 մարդու, իսկ 1914 թ. Ռուսական ամբողջ կայսրության մեջ՝ 2054000 մարդու։

Բերված թվերը հաստատում են, որ, իրոք, Ռուսաստանին միացումով Արևելյան Հայաստանի բնակչությունը ոչ միայն փրկվեց ձուլման ու բնաջնջման աղետից, այլև Արևելյան Հայաստանը դարձավ հայության պահպանման ու ազգահավաքման հաստատուն օջախ։ Դա էլ կանխորոշեց հայ ժողովրդի զարգացման հետագա պրոգրեսիվ ընթացքը։

Իսկ ինչպիսի՞ բախտ վիճակվեց հայ ժողովրդի մյուս հատվածին՝ արևմտահայությանը։ Այս հարցի պատասխանը (թեկուզև խիստ համառոտ ու ընդհանուր գծերով) հույժ կարևոր է, քանի որ դա առավել նկատելի կդարձնի հայ ժողովրդի գոյատևման, համախմբման, հետևապես և նրա տնտեսական, քաղաքական ու մտավոր կյանքի զարգացման համար Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման պատմական նշանակությունը։

Այն ժամանակ, երբ Ռուսաստանին միացվելու հետևանքով Արևելյան Հայաստանում, ինչպես և ռուսական ամբողջ կայսրության մեջ արագորեն աճում էր հայ բնակչությունը, Արևմտյան Հայաստանում սուլթանական կառավարության վարած դաժան, հայատյաց քաղաքականության հետևանքով հայերը նվազում, բնաջնջվում էին։

Այս դառը ճշմարտությունը ցույց տալու համար, հեռավոր պատմության ծալքերը չմտնելով, դիմենք մեր ժամանակներին մոտ փաստերին։ 1894—1896 թթ. սուլթան Աբդուլ-Համիդի կազմակերպած արյունալի ջարդերի զոհ

---

21 Տե՛ս Զ. Կորկոտյան, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831—1931), Երևան, 1932, էջ 182։

22 Տե՛ս Խ. Ավդալբեկյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում 1801—1917 թթ., էջ 26։

դարձան 300—350 հազար անմեղ հայեր[23]։ Դրան հաջորդում է 1909 թ. երիտթուրքերի կազմակերպած Կիլիկիայի 30 հազար հայերի կոտորածը։

Թուրք սատրապների բարբարոս հայաջինջ քաղաքականությունն իր զարհուրելի սանձարձակությանը հասավ համաշխարհային առաջին պատերազմի տարիներին արևմտահայերի գենոցիդի կազմակերպումով[24]։ Այդ ժամանակ թուրքական արյունոտ դաշույնի զոհ դարձան ավելի քան մեկ և կես միլիոն արևմտահայեր։ Հարյուր հազարավոր հայեր էլ իրենց պապենական օջախներից բռնիորեն արտաքսվեցին օտար երկրներ։ Ամայացավ Արևմտյան Հայաստանը, զրկվեց անհիշելի ժամանակներից այստեղ ապրող իր օրինական տիրոջից՝ հայ ժողովրդից։ Թուրք զավթիչները ավերեցին նրա երբեմնի շեն գյուղերն ու քաղաքները, կողոպտեցին ժողովրդի ողջ ունեցվածքը, կործանեցին հայ շինականի ձեռքով կերտված հնագույն ճարտարապետության ու արվեստի հոյակապ կոթողները։

Սովետական պատմաբան Գ. Ա. Շպաժնիկովի տվյալներով առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին թուրքական տիրապետության տակ ապրող հայերի թիվը կազմել է երեք միլիոն մարդ[25]։ Սակայն թուրքական կառավարության կազմակերպած զանգվածային ջարդերի ու բռնագաղթերի հետևանքով այժմ Թուրքիայում ապրող հայերի թիվը նվազել և կազմում է 130 հազարից քիչ ավելի[26]։

Թուրք ջարդարարների իրագործած արևմտահայերի գենոցիդը իր նախադեպը չունեցող ցեղասպանություն էր։ Իհարկե, թեպետ նրա կազմակերպիչները և իրագործողները սուլթանական կառավարությունը և թուրք էքստրեմիստներն էին, սակայն այդ բանում հանցանք ունեն արևմտյան տերությունները։ Արևմտահայերի գենոցիդը կազմակերպվեց Թուրքիայի դաշնակից կայզերական Գերմանիայի գիտությամբ և մասնակցությամբ։ Հայ ժողովրդի այդ մեծ արհավիրքի համար պատասխանատու են նաև Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և իմպերիալիստական մյուս պետությունների այն ժամանակվա կառավարող շրջանները, որոնց ուխտադրուժ ու հանցագործ թողտվության քաղաքականությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց իրագործելու այդ ոճրապարտ ցեղասպանությունը։

Հայ ժողովրդի պատմության այդ ողբերգական էջը ևս մի ապացույց է Հայկական հարցում արևմտյան մեծ տերությունների վարած ավանդական աղետաբեր քաղաքականության։ Վերջինս իր շեշտված արտահայտությունը գտավ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց անմիջապես հետո սկսված 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից ի վեր։

Արևմտահայերը, ականատես լինելով ռուսական զենքի օգնությամբ պարսկական-խանական լծից արևելահայերի ազատագրմանը, իրենք ևս ռուսական բանակներին ցույց տվեցին ռազմական, տնտեսական և բարոյական

---

23 Վիկտոր Բերարի տվյալներով 1894—1896 թթ. Թուրքիայում սրի քաշված հայերի թիվը հասնում է 500 հազար մարդու (տե՛ս «Братская помощь армянам». Сборник, М., 1898, էջ XXIII, LXXII)։

24 Մանրամասն տե՛ս «Геноцид армян в Османской империи». Сборник документов и материалов под ред. М. Г. Нерсисяна, Ереван, 1966.

25 Տե՛ս Г. А. Шпажников, Религия стран Западной Азии. Справочник, М., 1976, էջ 265։

26 Տե՛ս նույն տեղում, էջ 266։

ակտիվ օգնություն, հուսալով, որ այդ պատերազմում Ռուսաստանի հաղթանակը իրենց ևս ազատագրություն կբերի։ «Այն ժամանակներից,— գրում է Լեոն,— երբ ռուսաց իշխանությունը հաստատվեց Անդրկովկասում և սկսեց զենքի ուժով ոչնչացնել Պարսկաստանի տիրապետությունը, Թուրքիայի հայերը նույնպես աչք դարձրին դեպի հյուսիսի քրիստոնյա աղգը. նրա մեջ էին տեսնում այն ուժը, որ կարող էր աղատագրել իրենց Թուրքական լծից»[27]։

Քաղաքական այս մտայնությունը դարեր շարունակ իշխել է արևմտահայ ազատագրական շարժման մեջ։ Հայ ժողովրդի կնճռոտ ճակատագրով անկեղծորեն մտահոգված Վ. Բրյուսովը 1916 թ. գրել է. «Արդեն մեկ դար է, ինչ հայ ժողովրդի մի զգալի մասը ապրում է ռուսական կայսրության սահմաններում։ Հայերը մեր համաքաղաքացիներն են, իսկ դեռևս մուսուլմանական լծից չազատագրված հայկական մարդերը (Արևմտյան Հայաստանը—Զ. Գ.) ևս հենց ռուսներից են սպասում իրենց ազատագրությունը»[28]։

Եթե մի հետադարձ հայացք գցենք 1828—1829 թթ. ռուս-Թուրքական պատերազմի Կովկասյան ռազմաճակատի գործողությունների ընթացքի վրա, ապա ռուսական բանակների տարած հաղթանակների շնորհիվ այն ժամանակ արևմտահայերի ազատագրության համար, իրոք, արդեն ռեալ հնարավորություններ էին ստեղծվել։ Պատերազմի ընթացքում Կովկասյան հատուկ կորպուսը գրավել էր Կարսը, Ախալքալաքը. Ախալցխան, Արդահանը, Բայազետը, Ալաշկերտը, Հասան-Ղալան, Էրզրումը, Բաբերդը, Գյումուշխանեն, Մուշը և մի շարք այլ քաղաքներ ու գավառներ։ Թվում էր, որ իրականանում է հայ ժողովրդի բաղձանքը՝ արևմտահայության ազատագրումը սուլթանական լծից։ Սակայն արևմտյան մեծ տերությունների հակառուսական դիրքորոշման հետևանքով դժբախտաբար այդ տեղի չունեցավ, քանի որ Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը հակասում էր այդ տերությունների գաղութատիրական շահերին Միջին և Մերձավոր Արևելքում։ Ուստի նրանք շտապեցին իրենց պաշտպանության տակ առնել բռնապետական Թուրքիային և արեցին ամեն ինչ ռուսական բանակների ձեռք բերած հաջողությունները ի չիք դարձնելու համար։ Անգլիայի. Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի կառավարությունների կողմից Ռուսաստանի վրա գործադրած ճնշումը (ընդհուպ մինչև պատերազմ հայտարարելու սպառնալիքը) հարկադրեց Ռուսաստանին Ադրիանապոլսի հաշտությանն պայմանագրով Թուրքիային վերադարձնել այդ հողերը, բացառությամբ Ախալցխայի փաշայության մի մասի։ Գրեթե նույնը կրկնվեց նաև ռուս-Թուրքական հետագա պատերազմների ժամանակ։ Արևմտյան մեծ տերությունները, իրենց զավթողական շահերի թելադրանքով, Ռուսաստանի դեմ Թուրքիային հովանավորելու ննդամիտ քաղաքականությանը զոհաբերեցին հայ ժողովրդի ազգային շահերը՝ արևմտահայության ազատագրումը։

Այսպիսով, արևմտյան մեծ տերությունների հաճությամբ Արևմտյան Հայաստանը բռնապետական Թուրքիայի տիրապետության տակ թողնելը և Հայկական հարցը առուծախի վերածելը դարձավ արևմտահայության գենոցիդի պատճառներից մեկը։ Ժամանակի անգլիական ոճակցիոն պետական գործիչ Դ. Լլոյդ Ջորջն անգամ հարկադրված եղավ հրապարակորեն խոստովանել Անգ-

27 Լեո, Գրիգոր Արծրունի, հատ. 2, Թիֆլիս, 1903, էջ 107։
28 В. Брюсов, Поэзия Армении, Ереван, 1973, էջ 10։

լիայի և արևմտյան մյուս տերությունների անմիջական մեղսակցությունը արևմտահայերի իրար հաջորդած աղետներին։ Նա գրել է. «Սան-Ստեֆանոյի պայմանագրի համաձայն ռուսական զորքը պետք է օկուպացներ Հայաստանը (Արևմտյան Հայաստանը—Զ. Գ.), քանի դեռ չէին իրագործվել անհրաժեշտ բարենորոգումները։ Այդ որոշումը բեկանվեց 1878 թ. Բեռլինի պայմանագրով, որն ամբողջովին հանդիսանում էր մեր սպառնացող քաղաքականության արդյունք։ Ռուսները հարկադրված եղան հեռանալ. դժբախտ հայերը կրկին ճզմվեցին իրենց հին հարստահարիչների կրնկի տակ։ ...Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անկասելիությամբ հանդեցրեց 1895—1897 և 1909 թթ. սարսափելի ջարդերին ու 1915 թ. սոսկալի սպանդին... Հայաստանը մեր զոհն է... մենք թուրքերին հնարավորություն տվեցինք իրագործելու այդ ոճրագործությունը»[29]։

Զուլման ու բնաջնջման ելքին հասած հայ ժողովրդի համար Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման նշանակության արժեքավորման գլխավոր չափանիշը առաջին հերթին եղել է ժողովրդի գոյատևման հարցը։ Դրա համար էլ դեռևս այդ իրադարձության ականատես, հայ մեծ լուսավորիչ-դեմոկրատ Խաչատուր Աբովյանը, խորապես ըմբռնելով Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական նշանակությունը առհասարակ և, մասնավորապես, հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանման համար, գրել է. «...Քոռ նախանձոտ մարդին գործքով ցույց կտա, թե հայ ազգը ո՞չ թե փողի կամ շահի խաթեր ա ռուսի տերության անունը պաշտում, այլ թե իր սրտի ուխտն ուզում կատարի, որ իրան հավատն ու ազգը պահողին արինը, կյանքը, որդին չխնայի»[30]։

Այս հարցում նույնպիսի դիրքորոշում են ունեցել Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորմանը ժամանակակից հայ հասարակական ականավոր գործիչներ Մ. Թաղիադյանը, Հ. Այտմդարյանը և նրանց հաջորդած բոլոր սերունդների հայ առաջադեմ ու հեռատես մտածողները։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց շուրջ մեկ դար հետո էլ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանը գրել է. «Հայկական հարցը վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, հալածանքների ու գաղթականությունների հարց է, նա գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր է։ Եվ նրա հաջողությունը միշտ կապված է եղել Ռուսաստանի հաջողության հետ։ Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ, վեր է կացել հայկական հարցի հաջողության դեմ և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական գազանություններին ու հայկական սարսափներին։ Նա պատասխանատու է հայ ժողովրդի ծով արյան ու մարդկության պատմության առաջ»[31]։ Ապա անդրադառնալով Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման նշանակությանը, Հովհ. Թումանյանը գրել է. «...Մի շարք ռուս-պարսկական պատերազմներից հետո վերջնականապես 1828 թվին Ռուսաստանը տիրեց հին Սյունիքը, Գուգարքը ու Արարատյան երկիրը և մի անդամ ընդմիշտ վերջ տվեց կոտորածներով, գաղթականություններով ու առե-

29 Տե՛ս Ллойд Джордж, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, էջ 390։
30 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, Երևան, 1948, էջ 177։
31 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 230—231։

վանգումներով հայտնի Հայկական հարցին Հայոց աշխարհքի էս մասում, կամ ուրիշ խոսքով՝ պարսկահայկական հարցին»[32]։

Այսպիսով, մեկ ժողովրդի երկու հատված, բայց տարբեր տիրապետություններ, տարբեր ճակատագրեր... Հակառակ հայ ժողովրդի կամքին ու նրա ազգային շահերին, արևմտյան մեծ տերությունների հակառուսական և հայադավ քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանը սուլթանական Թուրքիայի տիրապետության տակ թողնելը հանգեցրեց արևմտահայության մեծ ողբերգությանը՝ նրա դաժան դենոցիդին։

Բոլորովին այլ ընթացք ունեցավ հայ ժողովրդի արևելահայ հատվածի ճակատագիրը։ Ռուսաստանի հետ միավորվելով արևելահայերը փրկվեցին իրենց սպառնացող ֆիզիկական բնաջնջման աղետից, երկրամասն էլ դարձավ համայն հայության ազգահավաքման-համախմբման օջախ և Ռուսաստանի բարերար ազդեցության ներքո ապրեց տնտեսական, մշակութային և քաղաքական առաջընթաց։ Ռուս մեծ ժողովրդի հետ ձեռք-ձեռքի տված, նրա հետ միասին մարտնչելով դասակարգային պայքարի ահեղ գոտեմարտերում, շնորհիվ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի և Հայաստանում սովետական կարգերի հաստատման, հայ ժողովուրդը առընդմիշտ թոթափեց ազգային ու սոցիալական լուծը և բռնեց կոմունիզմի լուսաշող ուղին։

ЗНАЧЕНИЕ ПРИСОЕДИНЕНИЯ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ К РОССИИ ДЛЯ НАЦИОНАЛЬНОГО СУЩЕСТВОВАНИЯ И КОНСОЛИДАЦИИ АРМЯНСКОГО НАРОДА

Доктор историч. наук З. Т. ГРИГОРЯН

(Резюме)

Присоединение Восточной Армении к России, завершившееся Туркменчайским договором 10 (22) февраля 1828 г., было поворотным событием в жизни армянского народа. В результате этого исторического акта Восточная Армения стала притягательным центром для всего армянского народа. В 1828—1829 гг. из Персии в Восточную Армению переселилось около 45 тыс. армян, а после заключения Адрианопольского договора из Турции в 1829—1831 гг. в пределы русских владений переселилось 90—100 тыс. армян. После этих переселений в корне изменился национальный состав населения Восточной Армении. Благодаря вхождению Восточной Армении в состав России значительная масса армян была спасена от физического уничтожения, а Восточная Армения стала национальным очагом армянского народа, где создались условия для национальной консолидации народа, развития его экономики, культуры и политической жизни.

32 Նույն տեղում, էջ 228։